# ՄԵԶ ԾԱՆՈԹ
# ԵՎ ԱՆԾԱՆՈԹ
# Թ ՈՒ Մ Ա Ն Յ Ա Ն Ը

Նվիրվում է ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150 ամյակին



**Հազար տարով, հազար դարով առաջ թե ետ, ի՛նչ կա որ.**

**Ես եղել եմ, կա՛մ, կլինեմ հար ու հավետ, ի՛նչ կա որ,**

**Հազար էսպէս ձևեր փոխեմ, ձևը խաղ է անցավոր,**

**Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ի՛նչ կա որ:**

*1921, Մայիսի 3*



Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կնքահայրս, ցողը՝ մյուռոն կենսավետ,
Ու կնքողը Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ
պոետ:

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ՝

**ԴՍԵՂ - ԴՍԳԵՂ – ԴՐՍԻ ԳԵՂ՝**

**ՋՈՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎԵԼՈՒ**

**ՊԱՏՃԱՌՈՎ**

# ԴՍԵՂ



# Մեր գյուղն էն է, որ հըպարտ,



# Լեռների մեջ միգապատ,



# Խոր ձորերի քարափին՝



# Ձեռք տրված ճակատին`



# Միտք է անում տղխրադեմ.



# Ի՞նչ է ուզում՝ չգիտեմ...



# ԼՈՌՈՒ ՁՈՐԸ



# ԼՈՌՈՒ ՁՈՐԸ

Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
Ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու
անթարթ
Հայացքով իրար նայում են
հանդարտ:

Նըրանց ոտքերում՝ գազազած գալի՝
Գալարվում է գիժ Դև-Բեդը մոլի,
Խելագար թըռչում քարերի գըլխով,
Փըրփուր է թըքում անզուսպ
երախով,
Թըքում ու զարկում ժեռուտ
ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՈՂՆԵՐԸ



**Հայրը՝ Տեր-Թադևոսը**
*(Ասլան ) 1839-1898*



**Մայրը՝ Սոնան**
*1842-1936*

## ՍՈՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ



Ինչ որ սարի բան կա իմ մեջ՝ դա իմ մորից է՝ Նանից։

Թռչող կին էր իմ մայրը. արծվի թռիչք ուներ։

Ամենաբարձր սարերում, ծաղկոտ դաշտերում է պահել ինձ։ Շատ բան է տվել ինձ մայրս - շա՜տ։

# ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍ



Ամենալավ և ամենամեծ բանը, որը ես ունեցել եմ իմ կյանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով: Չափազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն միշտ ուներ մի խորը լրջություն:

Թեև քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ էր և ձի նստող:

# ԴՍԵՂԻ Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ԻՐ ԺԱՄԱՆԱԿ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ Տ ՈՒ Ն Ը



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ






# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ Տ ՈՒ Ն Ը՝ ՆԵՐՍԻՑ



# ԽՆՈՑԻ

Հարի՛, հարի՛, խնոցի՛,
Մեջդ բարի, խնոցի՛,
Ունկըդ բարակ, խնոցի՛,
Մեջըդ կարագ, խնոցի՛:

1907

# ԽՆՈՑԻՆ ԵՎ ԱՄԲԱՐՆԵՐԸ



# ՓՈՒՌԸ ԵՎ
# ՀԱՑԻ ԿԱԽՈՑԸ



# ՍՈՆԱՅԻ ՍՊԱՍՔԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՕՐՈՐՈՑԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՏԱՆ Ս Ր Ա Հ Ը

**ՍՈՆԱՅԻ ԳՈՐԾԱԾ ԳԵՂԱՁԱՐԴ ԿԱՐՊԵՏՆԵՐԸ**

**ՍՈՆԱՅԻ ՍԱՆԴԵՐՔԸ ԵՎ Ճ Ա Խ Ա Ր Ա Կ Ը**





# ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍԻ ՄԱՀՃԱԿԱԼԸ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՏԱՆ ՄՐԱՀԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊԱՀԱՐԱՆՆԵՐԸ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ Գ Ր Ա Ռ Ո Ւ Մ Ը



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ

# ԱՌԱՋԻՆ ՍԵՐՆ

# ՈՒ

# ԳՐԱԿԱՆ

# ԵՐԱԽԱՅՐԻՔԸ

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

**Յոգուս հատոր**
**Սըրտիս կըտոր,**
**Դասիս համար**
**Դու մի՛ հոգար,**
**Թե կան դասեր**
**Կա նաև սեր,**
**Եվ ի՞նչ զարմանք,**
**Իմ աղավնյակ,**
**Որ կենդանի**
**Մի պատանի**
**Սերը սըրտում**
**Դաս է սերտում:**

1881

# ՊԱՏԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԸ՝ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՍԱՆ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՈՒՄ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԻՇՏԸ

## Արտավազդ Թումանյան

Տաղանդավոր երիտասարդը զոհվեց 1918-ին, 24 տարեկան հասակում, Վանի երկրորդ նահանջի ժամանակ՝ վերջնապահ խմբի փոքրաթիվ կազմում: Թումանյանի որդու կորուստը ոչ միայն մեծ բանաստեղծի, այլեւ հայ մշակույթի մեծ կորուստներից էր: Նա բնության կողմից բացառիկ շնորհներով օժտված մի հմայիչ ու վառվռուն երիտասարդ էր: Գրում էր պիեսներ, բանաստեղծություններ, հրաշալի նկարում, հանդես գալիս արվեստաբանական լուրջ հոդվածներով:



# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈՐ ԵՎ ՊԱՊԻ ՇԻՐԻՄՆԵՐԸ
# ԴՍԵՂԻ Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

**Երկու շիրիմ իրար կից,**

**Հավերժական լուռ**

**դըրկից,**

**Թախծում են պաղ ու**

**խորհում**

**Թե՝ ի՞նչ տարան**

**աշխարհից:**



ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏՆ

ԱՍՏԾՈ ԿԱՑԱՐԱՆՆ Է...

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍԻՐՏԸ

**ՏՈՒՓԸ,
ՈՐՈՒՄ ՊԱՀՎԵԼ Է
ԳՐՈՂԻ ՍԻՐՏԸ**

**ԿՈԹՈՂԸ,
ՈՐԸ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է ՍՐՏԻ
ԱՄՓՈՓՄԱՆ ՏԵՂՈՒՄ**





# Ղ Ո Ջ Ա Ղ   Կ Ա Ց Ե Ք…

# ԽՈՋԻՎԱՆՔԸ
# ԵՎ
# ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՎԱՆԸ






Լինե՛ր հեռու մի անկյուն,
Լինե՛ր մանկան արդար
քուն,
Երազի մեջ երջանիկ,
Յաշտ ու խաղաղ
մարդկություն:

# ԲՆՈՒԹՅԱՆ

# ԵՐԳԻՉԸ



# ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ
# Ջ ՈՒ Գ Ա Հ Ե Ռ Ն Ե Ր

# ՎԵՐՆԱՏՈՒՆ



# «Վ Ե Ր Ն Ա Տ ՈՒ Ն»

*(1976)*

*հեղ.՝ Դ.Նալբանդյան*



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# Ղ.ԱՂԱՅԱՆԸ



*ԿԱՄ՝*

***ԱՍԼԱՆ ԲԱԼԱՆ***

*ՈՒ*

***ԱՍԼԱՆ ԱՊԵՐԸ***

# ԱՂԱՅԱՆԻ ՆՎԵՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ





# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՆՎԵՐԸ ԱՂԱՅԱՆԻՆ

**Իմ սիրելի Ասլան-ապեր,**
**Մինչև այսօր բախտդ կապ էր.**
**Փողդ շուտով պիտի ստանաս,**
**Հանկարծակի հարստանաս.**
**Երեք օր էլ կացիր հալա... ***
**Քո կարոտյալ Ասլան-բալա:**

*Մինչև գրեն հրամանը,
Ինչպես ասաց Խրիմյանը: 1898

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ

Հայոց կաթողիկոս՝ 1893-1907թթ.





# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ



Խրիմյանը Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի ձիով, Դսեղում:

Լուսանկարի հեղինակն է ինքը՝ Թումանյանը:

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆԸ



1907 թ. նոյեմբերի 6-ին «Նոր ալիքում» լույս է տեսնում «Երկու հայրը» պատմվածքը, որի հերոսը Խրիմյան Հայրիկն էր։

…Դու քան որդի ես կորցրել, իսկ ես քան հազար,- պատասխանեց Հայրիկը,— այդ էլ քան՝ եղավ քան հազար ու քան… Ո՞ւմն է շատ, տեր Սարգիս…

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ



**Թումանյանի՝ Ամենայն հայոց բանաստեղծ կոչման մասին կարդում ենք Թոթովենցի հուշերում:**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Հայոց կաթողիկոս՝ 1911-1930թթ.

Հենց նրա օրոք էր, երբ Թումանյանը հայ գաղթականներին պատսպարեց նորակառույց վեհարանի հարկի տակ՝ իրեն հռչակելով Ամենայն հայոց բանաստեղծ:



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ ԵՂԵՌՆԱԶԱՐԿ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի մեծ ողբերգությունը

ծանր հետք թողեց

ազգասեր բանաստեղծի հոգում …

Դառնացած սրտով նա գրեց հայտնի

«Հոգեհանգիստը»:

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՈՐԲԵՐԻ Հ Ա Յ Ր Ի Կ Ը



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ը



**Ես էլ ձեզ նման մի երեխա եմ: Հարազատ են ինձ բոլոր երեխաները, ձեր աշխարհը, որ իմ աշխարհին է. սիրում եմ ձեզ և ձեր աշխարհը:**

**Կցանկանայի, որ մեզնից հետո ունենաք երջանիկ բանաստեղծներ, որ երգեն ձեր հոգուն համապատասխան, զվարթ և պայծառ երգեր…**

Ի՞ՆՉ ԿԱ ԱՎԵԼԻ ԼԱՎ, ՔԱՆ ԳԻՐՔՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ…

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ Գ Ր Ք Ե Ր Ը

ԳՐԱԴԱՐԱՆՍ

Բազմած են շուրջըս նըրանք ամեն օր—
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհքի,
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Գրականությունը հայելի չէ լոկ. և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական մի հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից:

**Եթե գրականությունը կյանքի հայելին ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է:**

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ Հ Ե Ք Ի Ա Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

Կարծում են՝ հեշտ բան է հեքիաթ մշակելը:

Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտությունն է, ուր ամբողջը հավիտենական սիմվոլներ են:



# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Կարծում են հեշտ ու հանաք բան է մանկական գրվածք գրելը. դա ամենադժվար գործն է:**

**Երեխայի հոգու հետ գործ ունես ...**

# ԹՌՉՈՒՆԻ
# ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

# ԺՈՂՈՎՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆ

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

**Լ.ՇԱՆԹ**



**ՍՏ.ԼԻՍԻՑՅԱՆ**



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ Ն Ե Ս Ո Ն





Մանկության ընկերներից՝ Նեսոն

**Նա էլ եթե ուսում առներ, կրթվեր, ապահով լիներ՝ լավ մարդ կլիներ, գուցե ինձանից էլ շատ ավելի լավը…**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# ՀՈՎՀ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ





# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# Ս.ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ





# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԸ





# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՎՐԱՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

**Ա.Կանչելի**



1921թ. Վրաց գրողների հետ խնջույքի ժամանակ թամադան ասում է՝

**«Кацо, наши поэты кончились, у Туманяна больше дочерей, чем у нас поэтов…».**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ



**Նաիրյան խոսքի**
**ավագ նահապետ…**
**որից դեռ այնքան**
**սպասումներ ունի**
**հայրենի եզերքը…**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԸ

Ես կարդում եմ նրան ու ասում.-
Այս հմուտ, հանճարեղ Լոռեցին
Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝
հավասար՝ նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ,
մեծարանք տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝
իրար հետ խնջույքի նստելիս:

# ՀՈՎՀ. Թ ՈՒ Մ Ա Ն Յ Ա Ն Ը ԵՎ Ռ.ԴՐԱՄԲՅԱՆԸ

Գրական ատաղձի մասին խոսելիս՝ Թումանյանն իրեն քննադատողին այսպես է հակադարձում.
**Ի՞նչ անենք, ո՛վ Դրամբյան,**

**ծաղիկը դրած է մեջտեղը, և նույն**

**ծաղկից մեղուն մեղր է շինում,**

**օձը՝ թույն:**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԸ

Շեքսպիրը միշտ մնում է իմ ամենասիրելի բանաստեղծը: Եվ թեև դրամա չեմ գրել դեռ, բայց դրաման բանաստեղծության մեջ իմ ամենասիրած ձևն է, ու ինձ թվում է, թե դրամատուրգի կոչումն ունիմ ես:



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ
# ԵՎ
# «Տ Ի Տ Ա Ն Ի Կ» ՇՈԳԵՆԱՎԸ

1912թ. ապրիլի 16–ին խորտակվում է «Տիտանիկը»:

Թումանյանին տպավորել էր հատկապես նվագախմբի հերոսական քայլերգը՝ խորտակվողների ոգին բարձր պահելու համար: Նա գնում է «Տիտանիկի» քայլերգի սկավառակը: Լսում էր, հիանում մարդկային հերոսությամբ, աներկյուղ հայացքով մահվան հանդեպ:



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ԵՎ ԱՍՏՂԵՐԸ

**Կամիլ Ֆլամարիոն**



1922թ. ամռանը Կ.Ֆլամարիոնի «Երկնքի պատմությունը» գրքից տպավորվելով՝ գրում է իր վերջին՝ «Սիրիուսի հրաժեշտը» բանաստեղծությունը։

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ

**Հակումներով արևելցի էր,**
**կենցաղում՝ եվրոպացի: Շատ**
**կիրթ, բարձր ճաշակ ուներ,**
**սիրում էր ապրել**
**հարմարություններով՝ լայն,**
**առատ, մաքուր:**
*** * ***
**Փողկապը, թաշկինակը և գուլպաները**
**համապատասխան**



# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆԸ

**ԱՂՈԹՔ**

**Սողոմոնի պես, տեր, ես խելք չեմ ուզում,**

**Ինձ երկար օրեր և փող տուր բազում:**

**Ու մի ձեռք էլ շոր, միայն մոդնի, տեր,**

**Մին էլ մի հաստ փոր, տրոստ, ակնոցներ:**

**Եվ բավական է, դու վերեն դիտե,**

**Թե ինչեր կանե, այդ ծառադ գիտե:**

**1887**

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
# ԵՎ Ֆ ՈՒ Տ ՈՒ Ր Ի Զ Մ Ը



Կարծես թե էշի պոչը թաթախել են ներկի մեջ, կանգնեցրել կտավի մոտ ու քամսել…

# ԹՈՒՄԱՆՅԱՆԸ՝ ՖԵԼԻԵՏՈՆԻՍՏ

## «ՀԱՅԻ ՏՐՏՈՒՆՋԸ»

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

allabagoyan@mail.ru